ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Արսեն Ավետիսյան, Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի արագ արձագանքման բաժնի պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ղազախստան (ք. Աստանա), 2023 թվականի մայիսի 29-ից հունիսի 1-ը:

3. Հրավիրող կողմը.

Եվրոպական միության «Ավելի լավ ուսուցում ավելի անվտանգ սննդի համար» (BTSF) նախաձեռնություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Կենտրոնական Ասիայի և Կովկասի պետությունների համար անասնաբուժական անձնակազմի զարգացման վերաբերյալ տարածաշրջանային իրազեկման բարձրացում» թեմայով աշխատաժողովին մասնակցելու նպատակով:

5. Քննարկված թեմաները.

Կեղծված սննդամթերքի բացահայտում, ներմուծման կանխում, շուկայից հետ կանչում և ոչնչացում: Մաքսանենգ ճանապարհով սննդամթերքի տեղափոխման բացահայտում: Կեղծված սննդամթերքի առցանց վաճառք և դրանց դեմ տարվող աշխատանքները: Սննդամթերքի ներմուծման և արտահանման ժամանակ ուղեկցող հնարավոր կեղծ փաստաթղթերի բացահայտում: Համագործակցություն իրավապահ մարմինների և սննդամթերքի անվտանգության լիազոր մարմինների միջև:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Քննարկվել է կեղծված սննդամթերքի բացահայտումը ագրոպարենային շղթայում, դրա դեմ ուղված վերահսկողական միջոցառուների կիրառումը, իրականացվել է փորձի փոխանակում աշխատաժողովի մասնակիցների միջև:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաժողովին պայմանավորվածություններ և որոշումներ չեն կայացվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատաժողովի ժամանակ որևէ ժամկետներ, ձևեր չեն մշակվել և պատասխանատուներ չեն նշանակվել:

9. Ստորագրությունը, ամսաթիվը. 07 հունիսի 2023թ.